Հայաստանի
Հանրապետություն

Արմավիրի մարզ
գ. Հայկաշեն

N-61

«17» նոյեմբերի 2011 թ.

Արմավիրի մարզպետ
պարոն Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Կից ներկայացվում է Արմավիրի մարզի Հայկաշենի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 06 արտահերթ նիստի որոշումները:
Առդիր 7 թերթ

Համայնքի ղեկավար Բ. Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՀԱՅԿԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտքագրված թիվ 10870-11
«18» 11 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

2011թվականի նոյեմբերի «15» N_16

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով՝

համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշենի գյուղական համայնքի ավագանու 2011թվականի նոյեմբերի 15-ի թիվ 06 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանի՝	[ստորագ.]
1.Մանուկյան Ավետիք	
2.Մարտիրոսյան Միհր	
3.Սերոբյան Անդրեաս	
4.Հովհաննիսյան Գառնիկ	
5.Հարությունյան Զավեն	

Համայնքի ղեկավար Բ. Հովհաննիսյան

2011թվականի նոյեմբերի <<15>>

գ. Հայկաշեն

Հաստատվել է
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Հայկաշենի գյուղական համայնքի
2011թ. նոյեմբերի 15-ի ավագանու
թիվ 06 արտահերթ նիստի N որոշման

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշենի գյուղական համայնքի 2011թ. նոյեմբերի 15-ի ավագանու թիվ 06 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին .

   զեկուցող՝ Բ. Հովհաննիսյան

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշենի գյուղական համայնքի 2012 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին.

   զեկուցող՝ Բ. Հովհաննիսյան

3. Դրամական օգնություն տրամադրելու մասին.

   զեկուցող՝ Բ. Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

2011 թվականի նոյեմբերի «15». N-17-Ն

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշենի գյուղական համայնքի 2012 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանի՝	կողմ [ստորագ.]	դեմ[ստորագ.]	ձեռնպահ
1.Մանուկյան Ավետիք	_____	_____	_____
2.Մարտիրոսյան Միհր	_____	_____	_____
3.Սերոբյան Անդրեաս	_____	_____	_____
4.Հովհաննիսյան Գառնիկ	_____	_____	_____
5.Հարությունյան Զավեն	_____	_____	_____

Համայնքի ղեկավար Բ. Հովհաննիսյան

2011 թվականի նոյեմբերի «15»

գ. Հայկաշեն

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Հոկտեմբերյան գյուղական համայնքի
2011 թվականի նոյեմբերի 15-ի նավագանու
թիվ 06 արտահերթ նիստի N- 17-Ն որոշման

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի , շինությունների /ներառյալ ոչ հիմնական / շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է ՝

հիմնական օբյեկտների համար

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում ՝ այգեգործական /ամառանոցային/ տների , ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար ՝ 10.000 դրամ .

2) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար ՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 15.000 դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 40.000 դրամ,

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 դրամ,

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2.000 դրամ,

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 4.000 դրամ,

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման , ուժեղացման , վերականգնման , արդիականացման , աշխատանքների / բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար , եթե սահմանված կարգով ճարտարապետաշինարարական նախագծով ՝

1) չի նախատեսվում կցակառույցների , վերակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի [illegible] կամ [illegible] գործառական նշանակության փոփոխություն՝ 3.000 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման , վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից , նախատեսվում է նաև կցակառույցների , վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն , ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի , կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը ՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելցման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների , վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ՝ ստորգետնյա/ շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն , ապա, սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն , ուստի [illegible] են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը :

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների քնման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 3000 դրամ :

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5.000 դրամ .

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5.000 դրամ :

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ .

2) հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների , հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 150.000 դրամ :

6 . Համայնքի տարածքում բանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առ ու վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է ընթացիկ տարվա համար 50.000 դրամ :

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի , զվարճանքի , շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները , բաղնիքները / սաունաները / խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝35.000 դրամ .

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 80.000 դրամ.

3) բաղնիքների / սաունաների / համար՝ 300.000 դրամ .

4) խաղատների կազմակերպման համար՝ 600.000 դրամ .

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 400.000 դրամ .

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 130.000 դրամ :

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է .

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝1.000 դրամ.

2) թունդ ալկոհոլային / սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս / արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝2.500 դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 1.000 դրամ .

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ :

9. Համայքնի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 3.000 դրամ :

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու / բացառությամբ երթուղային տաքսիների / ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթցիկ տարվա համար սահմանվում է 5.000 դրամ :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՀԱՅԿԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ

2011 թվականի նոյեմբերի «15» N-18

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական Ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշենի գյուղական համայնքի 2011թվականի բյուջեի 10բաժին. 07խումբ 01 դասի 4729 հոդվածից 400000 (չորսհարյուր հազար) դրամ տրամադրել սոցիալապես անապահով ընտանիքներին՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Ավագանի՝

1.Մանուկյան Ավետիք
2.Մարտիրոսյան Միհր
3.Սերոբյան Անդրեաս
4.Հովհաննիսյան Գառնիկ
5.Հարությունյան Զավեն

Համայնքի ղեկավար Բ. Հովհաննիսյան

2011 թվականի նոյեմբերի «15»

գ. Հայկաշեն

Հավելված
Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի
2011թվականի նոյեմբերի 15-ի ավագանու թիվ
06 արտահերթ նիստի N- 18 որոշման

ՑՈՒՑԱԿ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ

1. Կիրակոսյան Սարիբեկ - 50000 դրամ
2. Ավետիսյան Վարդան - 50000
3. Արսենյան Աշոտ - 50000
4. Արսենյան Վահան - 50000
5. Հակոբյան Արեգնազ - 10000
6. Բաղալյան Գոհար - 40000
7. Մարտիրոսյան Միեր - 30000
8. Հակոբյան Աբգար - 40000
9. Հարությունյան Վլադիկ - 40000
10. Հարությունյան Վազգեն - 40000